


Փաստ. անվանումը	ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-37-01
Հաստատման ամսաթիվը	12 / 12 / 2014
Արձանագրության N	17-14
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ, Սուրեն Օհանյան
Մշակող	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Էրիկայի հանձնաժողովի նախագահ



1. Փաստաթղթի փոփոխությունները

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱՋԱՅԻՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Եվրասիա Միջազգային Համալսարանի (այսուհետ՝ ԵՄՀ) էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման և իրականացման կարգը:
- 1.2. Էթիկայի հանձնաժողովի կանոնակարգը հաստատում է ԵՄՀ-ի գիտական խորհուրդը:
- 1.3 Էթիկայի հանձնաժողովը համարվում է ռեկտորին կից մշտապես գործող խորհրդակցական մարմին:
- 1.4 Հանձնաժողովի որոշումները ենթակա են կատարման ռեկտորի հաստատումից հետո:
- 1.5. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

2. Էթիկայի հանձնաժողովի կազմը

- 2.1 Էթիկայի հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 5-ը: Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից և անդամներից: Հանձնաժողովի կազմը հաստատում է ռեկտորը: Նախագահին և քարտուղարին նշանակում է ռեկտորը:
- 2.2 Հանձնաժողովի անդամների թեկնածությունները առաջարելիս հաշվի է առնվում նրանց բարոյական հատկանիշները, նրանց մասնագիտական ծեռքբերումները, հեղինակությունը և հասարակական գործունեությունը:
- 2.3 Էթիկայի հանձնաժողովը առաջնորդվում է ԵՄՀ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, աշխատողի աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոններով և այլ իրավական ակտերով:
- 2.4 Հանձնաժողովի կազմը ամբողջովին փոխվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ:
- 2.5 Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունները կարող են դադարեցվել ռեկտորի որոշման իհման վրա:

3. Հանձնաժողովի լիազորությունները և պարտականությունները

- 3.1 Հանձնաժողովը իր իրավասությունների շրջանակներում կարող է:
 - իրագործել ընդհանուր վերահսկողություն ԵՄՀ-ի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների, աշխատողի աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոնների պահանջների պահպանման համար
 - բարոյական գնահատական տալ ԵՄՀ-ի անդամների վարքագծին

- որոշումներ նախապատրաստել և ներկայացնել ԵՄՀ ռեկտորի հաստատմանը՝ բարոյական կոնֆիդենտների կանխարգելման և լուծման հարցերով
- անարգել այցելել ցանկացած ստորաբաժանում, ծանոթանալ էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի հետ, անցկացնել ստուգումներ, ուսումնասիրություններ, հետազոտություններ և ներկայացնել դրանց արդյունքները
- գրավոր առաջարկություններ ներկայացնել Հանձնաժողովի աշխատանքային պլանը կազմելիս
- անհրաժեշտության դեպքում պահանջելու Հանձնաժողովի արտահերթ նիստի գումարում:

3.2 Հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

- ծանոթանալ հանձնաժողովի նիստի նյութերին և առաջադրել սեփական դիրքորոշումը նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ
- պահպանել քննարկման ընթացքում հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը
- նիստերին չմասնակցելու դեպքում նախապես գրավոր տեղեկացնել Հանձնաժողովի քարտուղարին

3.4 Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

- անձնական դիմումի հիման վրա
- դատարանի կողմից սահմանափակ գործունակ կամ անգործունակ կամ անհայտ բացակայող ձանաչվելու դեպքում
- հանձնաժողովի անդամի մահվան դեպքում
- նիստերին պարբերաբար անհարգելի բացակայելու դեպքում

3.3 Հանձնաժողովի նախագահ՝

- պլանավորում, հրավիրում և նախագահում է նիստերը
- կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները
- ստորագրում է հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև գործունեությանը առնչվող այլ փաստաթղթեր
- հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները հրապարակում է առաջիկա նիստի ընթացքում

3.4 Հանձնաժողովի քարտուղար՝

- նախապատրաստում, գումարում և արձանագրում է Հանձնաժողովի նիստերը
- նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերի նյութերը
- նախապատրաստում է առաջարկություններ Հանձնաժողովի աշխատանքային ծրագրերի կազմման ու կատարման վերաբերյալ
- վերլուծում է Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող հարցերը և արդյունքների մասին գեկուցում Հանձնաժողովի նախագահին

4. Հանձնաժողովի նիստերը

- 4.1 Հանձնաժողովը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրում և վարում է նախագահը՝ որոշելով նիստերի օրակարգը և ժամանակը:
- 4.2 Նիստերը հրավիրվում են Հանձնաժողովի գործառույթների իրականացումը բնականոն ապահովելու պարբերականությամբ: Արտահերթ նիստերը հրավիրվում են ռեկտորի, նախագահի կամ անդամների 1/3-ի պահանջով:
- 4.3 Հանձնաժողովի նիստերը իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի ընդհանուր թվի կեսից ավելին:
- 4.4 Հանձնաժողովի նիստերը գումարվում են դռնփակ: Անդամները քվեարկում են կողմ կամ դեմ:
- 4.5 Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:
- 4.6 Հանձնաժողովի որոշումները ունեն խորհրդատվական բնույթ:
- 4.7 Որոշումները կայացնելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է այն անձին, ում դիմումի համաձայն քննարկվել է հարցը:
- 4.8 Հանձնաժողովի որոշումները ստորագրում են նախագահը, քարտուղարը և անդամները: Դեմ քվեարկած անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք, որը պետք է լինի պատճառաբանված:
- 4.9 Հանձնաժողովի նիստերի հրավիրման, նյութերի տրամադրման, անցկացման տեղի, ժամանակի և օրակարգի մասին անդամներին իրազեկում է քարտուղարը 3 աշխատանքային օր առաջ :
- 4.10 Հանձնաժողովի որոշման մեկ օրինակը պահպում է Հանձնաժողովի աշխատակազմում, իսկ մյուս օրինակը տրվում է աշխատողին, որի վերաբերյալ կայացվել է որոշումը:

5. Հանձնաժողովի խնդիրները և գործառույթները

5.1 Խնդիրներն են՝

- ԵՄՀ-ում բարոյական վարքագծի միասնական նորմերի ձևավորում
- բարոյական կոնֆլիկտների կանխարգելումն ու լուծումը
- ԵՄՀ-ի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների, աշխատողի աշխատանքային էթիկայի և վարքագծի կանոնների բոլոր պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումն ու նման խախտումների կանխարգելումն է:

5.2 Գործառույթներն են՝

- ստամում և ուսումնասիրում է աշխատողների վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումները
- նախապատրաստում է առաջարկություններ խախտումներ հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռնարկելու հարցում

- օժանդակում է ԵՄՀ-ի տարբեր ոլորտներում բարոյական կոնֆլիկտների լուծմանը
- որոշում է կայացնում էթիկայի նախատեսված կանոնները աշխատողի կողմից խախտելու վերաբերյալ

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն Կանոնակարգը, ինչպես նաև դրա փոփոխություններն ու լրացումները հաստատում է ռեկտորը:

6.2 Հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական և իրավական գործունեությունն իրականացվում է ԵՄՀ-ի միջոցների հաշվին: